Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

26.071

CA 32-K / 94

Ս. Ռ. 6.0.

ԲՈԼՈՐ

կուսակցական, խորհրդային, տնտեսական, կոոպերատիվային, արհմիութենական և կոմյերիտական կազմակերպություններին

334.5
Ա-85

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ԽՍՀՄ ԺՈՂԿՈՄԽՈՐՀՈՒ,
ՀԿ(բ)Ն ԿԵՆՏԿՈՄԻ ԵՎ
ՑԵՆՏՐՈՍՈՑՈՒԶԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Թարգմ. Մ.

334.5
Ա-85

ԽՍՀՄ ԺՈՂԿՈՄԿՈՐԴ. ԿԵՆՏՐՈՆ. ՀՐՄԱՏԱՐԱԿՉՈՒԹ.

Մոսկվա 1931—VII Ռոստով-Դոն

26.071
18.02.2014

ВСЕМ партийным, советским, хозяйственным, кооперативным, профсоюзным и комсомольским организациям.

О ПОТРЕБИТЕЛЬСКОЙ КООПЕРАЦИИ

Постановление СНК СССР, ЦК ВКП(б) и Центросоюза.

НА АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

Сев.-Кав. Кр. отд ЦЕНТР. ИЗДАТ народов СССР
„КРАЙНАЦИЗДАТ"

Ростов н-Д. Газетно-книжн. тип. СККПО.

Уполкрайлита № 3049. Ст.-ф. Б6 125x176. Зак. № 3098—2000.

05 JAN 2010
БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ

Բոլոր կուսակցական, խորհրդային, տնտեսական, կոոպերատիվային, արհմիութենական և կոմերիտական կազմակերպություններին

Հնգամյակի չորրորդ տարվա՝ ժողովրդական տնտեսության պլանի իրագործման ասպարեզում սպառողական կոոպերացիայի ամենալուրջ դերը, մեր յերկրի ապրանքաշրջանառության հսկայական աճումն և կոոպերատիվային ապրանքաշրջառու ցանցի մեծ տեսակարար կշիռը—կոոպերատիվային որգանների յետամնացությամբ ու բյուրակրատիկությամբ հանդերձ—պահանջում են նոր հիմունքներով վերակառուցել սպառկոոպերացիայի աշխատանքը։

Սպառկոոպերացիայի այժմյան աշխատանքում հիմնական թերությունը հանդիսանում է նրա անճկունությունն ու բյուրոկրատիզմը, վորոնք տանում են դեպի ապրանքաշրջանառության դանդաղումը, վորի հետևանքով հաճախ ստեղծվում է ապրանքների բացակայություն, իսկ պահեստներում նշանակալից չափով ավելանում են ապրանքային մնացորդները։

Սպառկոոպերացիայի աշխատանքում այդ թերությունները բացատրվում են գլխավորապես նրանով, վոր դուրս վանելով մասնավորին և մոնոպոլ դրություն նվաճելով շուկայում, սպառկոոպերացիան սկսեց անտես առնել տնտեսական հաշվարկի սկզբունքը և խորհրդային առևտրի ծավալման խնդիրը, սխալ կերպով յենթադրելով, վոր արդեն

հասունացել են ուղղակի մթերափոխանակությանն անմիջականորեն անցնելու պայմանները։ Սրանով հանդերձ, սպառկոոպերացիան մոռացել է, որ մասնավորի և մասնավոր առևտրի վտարումը դեռ ևս չի նշանակում ամեն տեսակ առևտրի վոչնչացում, որ ընդհակառակը, մասնավոր առևտրի վտարմանը հետևելու յե խորհրդային առևտրի ըստ ամենայնի զարգացումը և կոոպերատիվային ու պետական առևտրական կազմակերպությունների ցանցի ծավալումն ամբողջ ԽՍՀՄ-ում։

Այդ սխալների հիման վրա առաջ յեկած՝ սպառկոոպերացիայի ստորին ողակների ընտրականության սկզբունքի թուլացումը և կոոպերացիայի կտրվածությունն իր մասսայական բազայից, որը չեր կարող առաջ չբերել ապարատի անկոնտրոլ դրության ուժեղացում, սպառողի պահանջների անտեսում և «դիմազրկված (обезличенный) առևտրի» սիստեմ, այսինքն ապրանքների ներածում ու վաճառք, առանց հաշվի առնելու ԽՍՀՄ ռայոնների առանձնահատկություններն և նրանց բնակչության պահանջները։

Այդ թերությունները վերացնելու և սպառողական կոոպերացիայի աշխատանքը նոր հիմունքներով վերակառուցելու նպատակով, ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը, Համկոմկուսի (բ) Կենտրոնական Կոմիտեն և Ցենտրոսոյուզն առաջարկում են անցկացնել կյանքում հետևյալ միջոցառումները.—

1. ՍՊԱՌԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՄԱՆՐԱԾԱԽՍ ՅԵՎ ՄԵԾԱԾԱԽՍ ԱՌԵՎՏՈՒՐԸ

1. Նպատակ ունենալով լավագույն կերպով սպասարկել սպառողին, պարզացնել սպառողի մատակարարման դործի ղեկավարությունը, արագացնել ապրանքաշրջանառությունը և մասնագիտացնել առևտրական ցանցի ղեկավարությունը, Ցենտրոսոյուզին կից ստեղծել մեծածախս, մասնաճյուղային, համամիութենական, տնտեսական հաշվարկի հիմունքով գործող միություններ ըստ ապրանքների հետևյալ դրուպպաների.— ա) պատրաստի զգեստ, բ) կրկնակոշիկներ, կոշկեղեն և կաշվեղեն ապրանքներ, գ) գալանտերյա, տրիկոտաժ, պատրաստի սպիտակեղեն, դ) մանուֆակտուրային-մահուդյա-բրդյա ապրանքներ, յե) կուլտուրական սպասարկման ապրանքներ, զ) սիլիկատի ապրանքներ, ը) յերկաթեղեն, թ) տնայնագործական արդյունաբերության ապրանքներ, ժ) նպարեղեն, ի) պտուղ-բանջարեղեն (մթերման ու մատակարարման ֆունկցիաներով), լ) կաթնամթերքներ (մթերման և մատակարարման ֆունկցիաներով), իսկ Ցենտրոսոյուզը վերակառուցել ըստ ԺՏԳԽ և նրա նախագահության տիպի։

Հանրապետություններում, յերկրամասերում ու մարզերում ստեղծել մանրածախս առևտրի հանրապետական, յերկրային ու մարզային միություններ, ըստ ապրանքների վերը թված դրուպպաների, լրացնելով այդ միություններն ապրանքների հետևյալ դրուպպաներով.— ա) կահ-կարասիք, բ) միս, թռչնեղեն, գ) հրուշակային մթերքներ, դ) մանկամատակարարման ապրանքներ։

Ծանոթություն.—Այն դեպքերում, յերբ առանձին քաղաքներում յեղած վոչ մեծ առևտրական ցանցի կամ ապրանքաշրջանառության փոքրության հետևանքով մասնագիտականացրած ապրանքաշրջանառու ցանցի ստեղծումն ըստ ապրանքների բոլոր վերոհիշյալ տեսակների՝ հանդիսանում է աննպատակահարմար, թույլ տալ զանազան, հնարավորին չափ միանման ապրանքների վաճառման համակերպված ցանցի կազմակերպումը։

ՊԵՏ. ԿԱՆ ԳՐ. ՀԱՐԱՆ
ГОС. БИБЛИОТЕКА
ՀՍՍՌ-Արա. ՍՍՀ
Ս. ԱՍ. Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ
60769-67

Մասնաճյուղային միությունները կառավարելու համար ստեղծել վերատեսչություններ, վորոնք մեծածախս միությունների համար նշանակվում ու հաստատվում են Ցենտրոսոյուզի նախագահության կողմից, մանրածախս միությունների համար—հանրապետական, յերկրային ու մարզային սպառողական միությունների նախագահությունների կողմից։

Հանրապետական, յերկրային ու մարզային մասնաճյուղային միություններին հանձնել սպառողական կոոպերացիայի բոլոր մասնագիտականացրած վաճառատները, ըստ ապրանքների հիշյալ գրուպպաների, պարտավորեցնելով յուրաքանչյուր միության կից կազմակերպել պահեստային-տարայի-տրանսպորտային տնտեսություն։

Առաջարկել Ցենտրոսոյուզին՝ հանրապետություններում, յերկրամասերում ու մարզերում ստեղծել մեծածախսի պահեստներ, իսկ ԺՏԳԽ-ին — հանձնել Ցենտրոսոյուզին մի շարք հիմնական պահեստներ, վորոնք անմիջական կապ չունեն ձեռնարկությունների հետ։ ԺՏԳԽ-ը և Ցենտրոսոյուզը յերկու տասնորյակի ժամանակամիջոցում պետք է հաղորդեն Աշխատանքի ու Պաշտպանության Խորհրդին հանձնվող պահեստների քանակն ու հանձնման պայմանները։

2. Վերացնել արդյունաբերական ապրանքների վաճառման նորմաների պրակտիկան, ժամանակավորապես, միայն առանձին, առավել դեֆիցիտային ապրանքների վերաբերմամբ սահմանելով վաճառքի նորմա մեկական ձեռքի։

Վերացնել ապրանքների բրոնիայի պրակտիկան (բացի հետևյալ ոպերացիաների վերաբերյալ բրոնիայից.—փայտամշակություն, փայտի տեղափոխություն գետերով, ձրկնորսություն, մորթիների, ձվերի ու յուղի մթերում) և նրբանց որդերով վաճառքը, ժամանակավորապես որդերով

ապրանք բաց թողնելը պահպանելով միայն հագուստեղենի (կոստյումներ, վերարկու) և կոշկեղենի համար, սահմանելով որդերների ույժի ժամկետը (10 որ)։

3. Սահմանելով, վոր ապրանքների գլխավոր մասսան սպառվում է կոոպերատիվային մանրածախս ցանցի միջոցով, պետական մանրածախս առևտրի բոլոր ֆոնդերի 30 տոկոսից վոչ ավելի, Աշխատանքի և Պաշտպանության Խորհրդի թույլատվությամբ առանձին քաղաքներում թույլ տալ պետառևտրի տեսակարար կշռի բարձրացումը 35 տոկոսով։

4. Առաջարկել Ցենտրոսոյուզին՝ ձեռք առնել բոլոր անհրաժեշտ միջոցները, վորպեսզի մինչև այս տարվա աշունը բացվեն սննդամթերքների (հաց, միս, թռչնեղեն, ձուկ, բանջարեղեն, կաթնամթերքներ, մրգեղեն) նոր վաճառատներ—վոչ պակաս, քան 200-ը Մոսկվայում, վոչ պակաս, քան 150-ական՝ Լենինգրադում և Դոնբասում, վոչ պակաս, քան 100-ը Խարկովում, Կիևում, Ռոստովում, Բաքվում, Նիժնի-Նովգորոդում, Իվանովո-Վոզնեսենսկում, Թիֆլիզում, Ստալինգրադում, Սվերդլովսկում, Ոդեսիայում ու Տաշքենդում և վոչ պակաս, քան 80-ը ԽՍՀՄ մյուս խոշոր քաղաքներում և արդյունաբերական կենտրոններում։

5. Ցենտրոսոյուզը, ԺՏԳԽ և Մատակարարման Ժողկոմատը պիտի վերականգնեն արդյունաբերությանը տրվող՝ սպառկոոպերացիայի նախնական պատվերների սիստեմը։

2. ՍՊԱՌԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Սպառկոոպերացիայի սիստեմում ստեղծել արտադրական միություններ ըստ հետևյալ մասնաճյուղերի.—

ա) Խոշոր, մեքենայացված հացթխարաններ և հացա-

գործարաններ, միացնելով նրանց սպառկոոպերացիայի մարզային, յերկրային ու հանրապետական միությունների կից հատուկ տրեստներում, մտցնելով նրանց Ցենտրոսոյուզին կից՝ հացթխման համամիութենական միության մեջ։

բ) Սպառկոոպերացիայի խոշոր բանջարանոցային, խոզաբուծական, կաթնային ու թռչնաբուծական տնտեսություններ, վորոնք ունեն մարզային, համաքաղաքային կամ միջռայոնական նշանակություն, կազմակերպելով նրանց իրը ինքնուրույն տնտեսական միություններ՝ հանրապետական, յերկրային ու մարզային կոոպմիություններին կից և ապահովելով նրանց մեջ տեղական խորհրդի և արհմիությունների մասնակցությունը։

2. Սպառկոոպերացիան իրեն վոչ հատուկ ֆունկցիաներից ազատելու համար նրանից հանձնել—

ա) Արդյունաբերությունը— մատակարարման Ժողկոմատին (բացի մանր տնայնագործական տիպի ձեռնարկություններից—հանքային ջրերի արտադրություն, առատրի զանազան սննդային ավելորդությունների վերամշակություն և այլն)։

բ) Սափրատներն ու կարի արհեստանոցները—տնայնագործական-արդյունաբերական կոոպերացիային։

գ) Լվացքատները—քաղխորհրդներին։

դ) Կուլտուրական սպասարկումը—շարժական կինո, ռադիո, գրադարաններ—Սոյուզկինոյին, Լուսժողկոմատին, Փոստ-հեռագրական Ժողկոմատին. մանկական հիմնարկները—Առժողկոմատի ու Լուսժողկոմատի որգաններին, պահպանելով համապատասխան հատկացումները կոոպերացիային՝ իրեն փայատերերի կուլտսպասարկման համար։

Թե արդյունաբերական ձեռնարկությունների և թե լվացքատների, սափրատների ու կարի արհեստանոցների

հանձնումը կատարել՝ համապատասխան հաշվարկությամբ հատուցում տալով կոոպերացիային։

3. ՍՊԱՌԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՄԹԵՐՄԱՆ ԳՈՐԾՆԵՅՈՒԹՅՈՒՆԸ

1. Մատակարարման Ժողկոմատը, Ցենտրոսոյուզի հետ միասին, պիտի վորոշեն մթերումների այն տեսակները, վորոնց վերաբերմամբ սպառկոոպերացիան պիտի հանդիսանա հիմնական մթերող՝ տվյալ մարզի (յերկրամասի, հանրապետության) համար։

2. Նպատակ ունենալով անմիջական կապ հաստատել արդյունաբերական խոշոր կենտրոնների և արտադրող ռայոնների միջև, թույլ տալ Կենտբանկոոպին, Տրանսպորտի սպառողական ընկերության ու այդ կենտրոնների բանվորական փակ կոոպերատիվներին, բանջարեղեն ու կաթնամթերքներ մթերել թե մարզի (յերկրամասի, հանրապետության) ներսում և թե ուրիշ մարզերի (յերկրամասերի, հանրապետությունների) ռայոններում,—Մատակարարման Ժողկոմատի որգանների վերահսկողությամբ։

3. Բանջարեղենն ու կաթնային մթերքները, վորոնք սպառկոոպերացիան մթերում է տեղական մատակարարման համար, նա պիտի ոգտագործի անմիջականորեն, առանց Մատակարարման Ժողկոմատի որգանների կողմից վորևե վերադիր գին դրվելու այդ մթերումների վրա։

4. Նպատակ ունենալով խթանել ճաշարաններին, գործարանային կոոպերատիվներին և սպառողական կոոպերացիայի մյուս ստորին ողակներին կից՝ խոզերի չաղացման գործը, անհրաժեշտ համարել նրանց վերապահել այն բոլոր արտադրանքը, վոր ստացվում է խոզերի չաղացման կայաններից, այնպես, վոր այդ արտադրանքի 50 տոկոսը գործադրվի իրրև տվյալ ձեռնարկության լրացուցիչ մատակարարում, բացի պլանով նախատեսնվածից։

4. ԻՆՔՆԱՎԱՐ ՍԵԿՑԻԱՆԵՐԸ ՍՊԱՌԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՍԻՍՏԵՄՈՒՄ

1. Սպառկոոպերացիայում զատել հասարակական սնունդը իբրև անկախ սեկցիա, առանձին փայակալիտալով ու հաշվեկշռով, հանձնելով նրան «Վսենարպիտ» միությանը։

2. Առաջարկել Ցենտրոսոյուզին՝ յերկաթուղային ու ջրային կոոպերացիայի որինակով, անհապաղ սկսել հետևյալ ինքնավար կոոպերատիվային սեկցիաների կազմակերպումը.—ա) ձկնորսական, ռ) փայատաշկման ու գետերով փայտի տեղափոխության, գ) տորֆի մշակման սեկցիաներ։

5. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

1. Բարձրացնել սպառկոոպերացիայի աշխատավորների աշխատավարձը և մտցնել աշխատանքի վարձատրման խրախուսիչ սիստեմը՝ աշխատավարձը սահմանելով ըստ շրջանառության տոկոսների։

2. Սիստեմի մեջ մտցնել պրեմիաներ տալը՝ առևտրական ֆինպլանի վորակային ցուցանիշների գերակատարման, ապրանքաշրջանառության արագացման, ապրանքների բնական պակորդի ու կորստների իջեցման, առևտրա-կազմակերպչական ծախսերի կրճատման, փայավճարների, մուծումների, ավանսների ու բնակչության կոոպերացման պլանների կատարման ու գերակատարման համար։

Այս միջոցառումները պետք է իրականացվեն Մոսկվայի, Լենինգրադի, Խարկովի և Դոնբասի քաղաքային մանրածախս ցանցում մինչև 1931 թ. մայիսի 15-ը, իսկ սպառողական կոոպերացիայի ամբողջ սիստեմում—ոգոստոսի 15-ը։

3. Առաջարկել Ցենտրոսոյուզին, կոոպերացիայի և պետառևտրի աշխատավորների միության ԿԿ-ի հետ միասին մեկ ամսվա ժամանակամիջոցում մշակել գյուղական սպառողական կոոպերացիայի աշխատողների վարձատրման սխեմը։

6 ՍՊԱՌԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԿԱԴՐԵՐԸ

Ցենտրոսոյուզը 1931 թվականին պետք է ծավալե կարճատև դասընթացներ՝ պատրաստելու և վերապատրաստելու վոչ պակաս, քան 150 հազար աշխատողներ (խանութվարներ, բաժանմունքների վարիչներ, վաճառողներ, հասարակական սննդի աշխատողներ, ճաշարանների վարիչներ, խոհարարներ, հացթուխի աշխատողներ, այն է՝ բրիգադիրներ, կազմակերպիչներ և հաց թխողներ, քաղաքամերձ տընտեսությունների աշխատողներ, այն է՝ բանջարանոցապահներ, չաղացման կայանների, կաթնային ագարակների վարիչներ և այլն, հաշվետարական աշխատողներ)։

7 ՎԱՃԱՌԱՏՆԵՐՈՒՄ ՈՒ ՊԱՇԵՍՏՆԵՐՈՒՄ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՈՒ ԱՐՇՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

1. Կոոպերատիվ կազմակերպությունների առջև դրված խնդիրները հաջողությամբ իրագործելու և սպառողական կոոպերացիայի բոլոր ողակներում կուսակցական ազդեցությունն ուժեղացնելու համար, յուրաքանչյուր բանվորական կոոպերատիվին կից ստեղծել ցեխային կուսբջիջներ, ամեն մի առանձին տնտեսական միավորի (ճաշարան, վաճառատուն, ագարակ և այլն) մեջ կուսխմբակներով, վորոնք մտնում են ձեռնարկության կուսկազմակերպության մեջ։ Այն ձեռնարկություններում վորոնք չունեն բանվորական փակ կոոպերատիվներ, բջիջները կազմակերպել փակ

ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук

48013
CA 32-K/94

բաշխիչներին կից։ Սպառողական կոոպերացիայի մնացած ցանցի բոլոր մյուս խոշոր և միջին վաճառատներին ու պահեստներին կից կազմակերպել կուսակցական ու կոմերիտական ինքնուրույն բջիջներ, որոնք անմիջականորեն յենթարկվում են կուսակցության ռայկոմին կամ քաղկոմին։

2. Ամենակարճ ժամանակամիջոցում վերանայել կոոպերացիայի արհմիութենական որդանների ցանցն, այնպես, որպեսզի նրանցով ընդգրկել յուրաքանչյուր պարենախանութ, պահեստ, բազա և այլն, յենթարկելով նրանց համապատասխան ռայոնական կամ մարզային արհեստակցական կազմակերպություններին։ Յուրաքանչյուր փակ բանվորական կոոպերատիվին կից կազմակերպել ինքնուրույն տեղկոմ, տնտեսական առանձին միավորներին կից արհխմբակներով, աշխատելով, որ կոոպերատիվ աշխատողներն ամենամեծ չափով ընդգրկվեն արհմիութենական անդամակցությամբ։

Կուսակցության Կենտկոմը, ԽՍՀ Միության Ժողկոմխորհն ու Յենտրոսոյուզը չեն կասկածում, որ տեղական կուսակցական, արհեստակցական, կոոպերատիվ, կոմերիտական ու խորհրդային կազմակերպությունները ձեռք կառնեն բոլոր միջոցները, որպեսզի ներկա վորոշումը կատարվի ճշտությամբ և առանց հապաղելու։

ԽՍՀ Միության Ժողկոմխորհի նախագահ՝
Վ. ՄՈԼՈՏՈՎ (ՍԿՐՅԱԲԻՆ)
ՀԿ(բ)Կ Կկ-ի քարտուղար՝ Ի. ՍՏԱԼԻՆ
Յենտրոսոյուզի նախագահ՝ Ի. ԶԵԼԵՆՍԿԻ

(Հրապարակված է «Իզվեստիայի» № 129-ում, 1931 թ. մայիսի 12-ին)։

ՀՀ Ազգային գրադարան
NL0208024